



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱհՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ  
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

**ԱՆՎԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Քաղ. Երեւան

29 օգոստոսի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի  
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Վ. Հովհաննիսյանի  
Անդամակցությամբ՝ Վ. Պողոսյանի  
Ա. Ղեկրոսյանի

Ուսումնասիրելով «Լեռնային հարսփություն» ՍՊԸ-ի անհապական  
դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

**Պ Ա Ր Զ Ե Յ.**

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ «Լեռնային հարսփություն» ՍՊԸ-ն 05.08.2011թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածը՝ այնքանով, որքանով սահմանափակում է կողմերի իրավահավասարության սկզբունքի կիրառումը մինչեւ հայցադիմումը վարույթ ընդունելու պահը, ինչպես նաև նույն օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետն այնքանով, որքանով հարկային մարմնի համար չի նախադասում հարկային մարմնի կողմից կազմված սփուզման ակդերով վճարման առաջադրված գումարները բռնագանձելու պահանջներով դադարան դիմելու ժամկետը՝ միաժամանակ հարկային մարմնի կողմից կազմված սփուզման ակդերը վիճարկելու նպատակով անձանց համար նախադասելով դադարան դիմելու երկամյա ժամկետը, ճանաչել ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

Դիմողը պնդում է, որ ՀՀ վարչական դատարանը, մեկնաբանելով ՀՀ վարչական դադարավարության օրենսգրքի 5-րդ հոդվածը, նշում է, որ վերջինս դադարանում քննվող գործի վերաբերյալ դիրքորոշումներ ներկայացնելու առումով կողմերին հավասար հնարավորություն սպեղծելու պարփականություն է սահմանում միայն գործի քննության ընթացքում, սակայն գործի քննության ընթացքին հասնելու համար անհրաժեշտ է, որ դադարանում առկա

լինի հարուցված գործ: Դիմողը նաեւ կարծում է, որ ՀՀ վարչական դարպավարության օրենսգրքի 5-րդ հոդվածը, որը վերաբերում է կողմերի իրավահավասարությանը, ներառում է միայն գործի քննության ժամանակահարվածը, այսինքն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու պահից մինչեւ դադարննության ավարտը՝ չներառելով մինչեւ հայցադիմում ներկայացնելն ընկած ժամանակահարվածը, որը սահմանափակում է արդար դադարննության իրավունքը եւ դրա բաղադրաբարը համարվող՝ կողմերի իրավահավասարության սկզբունքը մինչեւ հայցադիմում ներկայացնելն ընկած ժամանակահարվածում՝ հակասություն առաջացնելով ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածների հետ:

Դիմողի կարծիքով, ՀՀ վարչական դարպավարության օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջը սահմանափակում է կողմերի իրավահավասարության սկզբունքն այնքանով, որքանով վիճարկման հայցի դեպքում հայցը կարող է դադարան ներկայացվել երկամյա ժամկետում՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից, սակայն օրենսգրքում բացակայում են վարչական ակտի հիման վրա հարկային մարմնի կողմից բռնագանձման հայց ներկայացնելու ժամկետները:

Ելնելով դիմումի եւ կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից՝ դադար կազմը գտնում է, որ դիմումի քննության ընդունումը ենթակա է մերժման՝ հետեւյալ պարզաբանությամբ.

1. ՀՀ վարչ. դադ. օր.-ի վիճարկվող դրույթները չեն գրկում անձին իր խախտված իրավունքները պաշտպանելու սահմանադրական իրավունքից, այլ ընդամենը նախադրեաւում են այդ իրավունքից օգբվելու որոշակի պայմաններ:

Դիմողը փորձել է վիճարկվող՝ ՀՀ վարչական դարպավարության օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը կապել վիճարկվող մյուս հոդվածի՝ դադար կան իրավահավասարությունը երաշխավորող 5-րդ հոդվածի հետ, մինչեւ վիճարկվող դրույթները կոչված են լուծելու դարարությաթ խնդիրներ, եւ անթույլավրելի է դրանք համադրելով՝ հակասություն գտնել դրանց եւ ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածների միջև: Դիմողը պարզած չի հիմնավորել, որ վիճարկվող դրույթներն առաջացրել են դադար պաշտպանության մաքչելիության իր իրավունքի եւ հավասար ու արդար դադարնության իրավունքի խախտում:

Դադար կազմն արձանագրում է նաեւ, որ քննարկվող իրավիճակում դիմողը նույնիսկ պարզած կերպով չի դիմել դադարան եւ, հետեւաբար, անդել, որ խախտվել են ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով երաշխավորված իր իրավունքները՝ առավել քան անհիմն է: Վիճարկվող դրույթները սահմանադրախրավական վեճ չեն առաջացնում եւ առկա է «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասում ամրագրված՝ գործի քննության ընդունումը մերժելու հիմք, այն է՝ դիմումն ակնհայր անհիմն է, քանի որ սահմանադրախրավական վեճ չի առաջացնում:

2. Դապական կազմը գրնում է նաև, որ դիմողը, ձեւականորեն վիճարկելով ՀՀ վարչ դափ. օր.-ի դրույթների սահմանադրականության հարցը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթների կիրառման իրավաչափության հարց:

Դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ վիճարկվող դրույթների ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ իհմնավորումները վերաբերում են ոչ թե այդ դրույթների սահմանադրականությանը, այլ դիմողի համար առաջացած ոչ բարենպաստ հետեւանքներին, ոչ բարենպաստ դապական ակտերի իրավաչափության իհմնախնդրին:

ՀՀ սահմանադրական դապարանի՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱԾ-21 որոշմամբ արդարադարձ իրավական դիրքորոշումն այն մասին, որ բոլոր այն դեպքերում, եթե դիմոցը, ձեւականորեն վիճարկելով դրույթների սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթների կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դապարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դապարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ:

Ղեկավարվելով «Սահմանադրական դապարանի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասով, 31-րդ, 69-րդ հոդվածներով, ՀՀ սահմանադրական դապարանի կանոնակարգի 26-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրական դապարանի թիվ 1 դապական կազմը

## Ո Ր Ո Շ Ե Ց.

«Լեռնային հարստություն» ՍՊԸ-ի անհապական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

